«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Դաստիարակ՝ Գայանե Ստեփանյան

Մանկապարտեզ՝ ՀՀ Շիրակի մարզ «Արձագանք-մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն……..
3

ԳԼՈՒԽ 1 ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ……
4

ԳԼՈՒԽ 2 ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ…….9

Եզրակացություն……..1
5

Օգտագործված գրականության ցանկ……..16

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Աճող սերնդին հայրենասեր դաստիարակել նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության բարձրացման գործին նրան հաղորդակից և մասնակից դարձնելու համար, «որդեգրել» հայրենիքում ընդունված օրենքները, դաստիարակել դրանց ենթարկվելու ունակություն, հարգել սահմանված կարգ ու կանոնը, ունենալ գիտակցական կարգապահություն, մասնակցել տնտեսության, մշակույթի, գիտության ու տեխնիկայի զարգացմանը, ժողովրդին պաշտպանել թշնամու ոտնձգություններից, հարկ եղած դեպքում կյանքը չխնայել հայրենի երկրի համար, քաղաքացու մեջ ձևավորել հպարտության զգացում սեփական երկրի, հարգանք՝ նրա անցյալի նկատմամբ: Հայրենասիրություն հասկացությունը օրգանական կապի մեջ է տվյալ երկրի պատմության հետ, քանի որ հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, նրա մշակույթի, հոգևոր կայացման ընթացքն է, անցյալը, ներկան, ինչպես նաև ապագան: Ցավով պետք է նշել, որ այսօր հայրենասիրական դաստիարակության ամբողջական արդյունավետ գործընթաց գրեթե չի իրականացվում, որի կարևոր պատճառներից մեկն այս ոլորտում ազգային գաղափարախոսության բացակայությունն է: Այդ ամենի հետևանքով առկա է հայրենասիրական դաստիարակության վերաբերյալ արդի մեթոդական գրականության պակաս: Հայրենասիրական դաստիարակության հիմքը դրվում է մանկապարտեզում: Այդ իսկ պատճառով հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել սովորողների հայրենասիրական որակների դաստիարակմանը: Այս ամենից էլ բխում է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը:

Հետազոտության խնդիրներն են՝

1.Ուսումնասիրել հայրենասիրական դաստիարակության առանձնահատ-կությունները մանկապարտեզում,

2.Ներկայացնել սաների հայրենաճանաչողությանն ուղղված պարապմունքի պլան:

ԳԼՈՒԽ 1 ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Գոյություն ունի մի ուժ, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերին՝ հոգով, մտքով և արյունով: Դա ազգային սերն է: Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարիտ սիրել այն:

ՐԱՖՖԻ

Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ:

Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումների ֆոնին, էթնիկական ու կրոնական, միջազգային ահաբեկչության սպառնալիքների պայմաններում առաջնային դերակատարում է ստանձնում հայրենասիրությունը: Որպես արժեք այն բազմաբովանդակ է:

Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշների համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրությունը հանդես է գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքացիականության և սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն առայսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով: Հայրենասիրության ըմբռնմանն ուղղված մոտեցումների ողջ բազմազանությունը կարելի է պայմանականորեն դասել ուղղությունների:[1]

Մեր երկրում տեղի ունեցող արմատական վերափոխումներն իրենց հետքն են թողնում հասարակության կյանքի տարբեր ոլորտների, այդ թվում՝ երիտասարդ

[1] Բրուտյան Վ., Հայրենասիրությունը որպես ազգային գաղափարախոսություն, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ, Վանաձոր 2015, էջ 17

սերնդի վրա, ինչը պայմանավորում է ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության ա ռանձ նահատկությունների բացահայտման անհրաժեշտու թյունը: Ժամանակակից պայմաններում հայրենասիրության բովանդակության կարևոր առանձնահատկությունն է նրա միտվածությունը դեպի ապագան: Իր հայրենիքին նվիրված մարդն անմիջականորեն մասնակ ցում է նրա առջև ծառացած խնդիրների լուծմանը: Տնտեսության վերելքը, ժողովրդավարական պետության կայացումը ուղղակիորեն կախված են հասարակության անդամի՝ իր հայրենասիրական պարտքի կատարումից, որն իրականացվում է ոչ միայն հերոսական արարք ների միջոցով, այլ նաև ամենօրյա գործերով: Դա պայմանավորում է ժամանակակից հայրենասիրության ևս մեկ առանձնահատկություն. իսկական հայրենասիրությունն անանց բնույթ ունի և դասվում է համամարդկային արժեքների շարքը:

Հայրենասիրական դաստիարակությունը մեր կողմից դիտվում է որպես դաստիարակների և սաների փոխգործակցության գործընթաց, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների ձևավորմանը, հայրենասիրական համոզմունքների և հայրենասիրական վարքագծի մշակմանը:

Հայրենասիրական դաստիարակության նպատակն ու արդյունքը հայրենասիրության ձևավորումն ու զարգացումն է: Ընդ որում՝ էական է հասարակական փորձի փոխանցումը սերնդին՝ որպես անձնական ձեռքբերում, ինչն արտացոլում է դաստիարակության գործընթացի էությունը՝ արտաքինի, օբյեկտիվի փոխադրումը ներքին, սուբյեկտիվ աշխարհ:

Մարդու կյանքում նախադպրոցական տարիքն այն շրջանն է, երբ դրվում են բարոյական զգացմունքների, որակների, ազգային պատկա նելության գիտակցութան ձևավորման և գնահատման նախնական հիմքերը: Երեխան սկսում է գնահատել ինչպես ուրիշի, այնպես էլ իր վատ ու լավ արարքները: Այդ գնահատումների հիմքի վրա երեխայի մոտ ծագում են ապրումներ, որոնք հետագայում վերածվում են դրական կամ բացասական սովորությունների: Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախադպրոցական տարիքի երեխաների մեջ դաստիարակված հատկություններն ու բնավորության գծերը հետագայում վճռական ազդեցություն են ունենում նրա անձնավորության ձևավորման գործում:

Նախադպրոցական տարիքում երեխայի վարքը զգալի չափով որոշվում է զգացմունքներով: Այդ իսկ պատճառով արդեն այդ տարիքից երեխաների մեջ դաստիարակում են տարբեր զգացմունքներ՝ սեր ծնողների նկատմամբ, սեր մեծերի, հայրենիքի նկատմամբ, սեր և հարգանք հարևան ժողովուրդների նկատմամբ, նաև դրվում են բարեկամության և ընկերության նախնական զգացմունքի հիմքերը: Այդ առիթով Բելինսկին ասել է. «Ինչքանով երեխան փոքր է, այնքանով անմիջական պետք է լինի նրա բարոյական դաստիարա կությունը, այսինքն՝ նրան պետք է ոչ թե սովորեցնել, այլ ընտելացնել լավ զգացմունքների, հակումների, սովորությունների»:

Եթե կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաներին ընտելացնում ենք տարրական, կենցաղային նորմերի, համատեղ խաղի, ապա ավագ նախադպրո ցական տարիքում այդ սովորություններն ամրապնդվում են և դաստիարակվում են նրանց ավելի բարդ տեսակները՝ կոլեկտիվ խաղերի, աշխատանքի պարապմունքների մեջ ընդգրկվելը, հանձնարարությունների և պարտականությունների կատարելը: Բարոյական դաստիարակության գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի անհատական առանձնահատկությունները, որոնք որոշվում են նրա նյարդային գործունեության յուրօրինակությամբ: Ելնելով այսքանից՝ յուրաքանչյուր տարիքի համար սահման վում են բարոյական դաստիարակության խնդիրներ: Երեխայի դաստիարակության գործում՝ նրա կյանքի առաջին տարում, մեծ տեղ է գրավում բարոյական զգացմունքների ձևավորումը:

Մեծահասակների հետ շփման գործընթացում երեխաների մեջ դաստիարակվում է սեր և հարգանք մեծահասակների նկատմամբ: Երեխան անհանգստանում է, երբ իր վատ արարքից մեծահասակները դժգոհում են, և հակառակը, ուրախանում է, երբ մեծահասակները գոհունակություն են հայտնում: Երեխաների զգացմունքները և արարքները անկեղծ են: Օր.՝ փոքրիկը նայում է նկարը, որի վրա պատկերված է երեխա, որը իր հասակակցի ձեռքից խլում է գնդակը: Հետո տեսնելով լացող

երեխային՝ շոյում է նրա գլուխը (ինչպես իր մայրն է անում) և տալիս է այն խաղալիքը, որի հետ ինքը խաղում էր:[2]

Միջին նախադպրոցական տարիքում բարոյական զգացմունքները դառնում են ավելի գիտակցական: Երեխաներ մոտ ձևավորվում է սեր դեպի իր քաղաքը, հարգանքի զգացմունք դեպի մեծահասակի աշխատանքը: Ավագ նախադպրոցական տարիքում բարոյական զգացմունքների հիմքում դաս տիարակվում են սեփական արժանապատվության զգացում, հարգանք մարդկանց նկատմամբ, ինչպես նաև հանձնարարված աշխատանքի պատասխանատվություն: Նախադպրոցական տարիքի երեխաներին հատուկ է ընդօրինակումը: Միևնույն ժամանակ անբավարար զարգա ցած վարքը չկարողանալով հսկել իր գործունեությունը կարող է հան գեցնել անցանկալի երևույթների: Այդ իսկ պատճառով վարքի բարո յական ունակությունների ձևավորումը համարվում է առաջնակարգ խնդիր:

Պետք է երեխաների մոտ ձևավորել բազմակողմանի ունակու թյուններ՝ ճիշտ խոսել, պահպանել մաքրություն, կարգ ու կանոն, կատարել օգտակար գործ: Երեխաների բարոյական դաստիարակության մեջ կարևոր նշանակություն ունեն հաջորդականությունը, պլա նաչափությունը, մանկապարտեզի ու ընտանիքի դաստիարակչական ներգործությունների միասնականությունը: Երեխաների վրա դաստիա րակ չական ազդեցությունները պետք է կիրառվեն հաջորդական բարդացումով: Երեխային պետք է հասկանալ, իսկ դա ամենից շատ նրա՝ մեծ լինելու ձգտման հետ հաշվի նստելն է: Այդ ձգտումը համարյա միշտ բախվելով նրա անփորձ և թույլ կամքի հետ ստեղծում է հակասություններ, որոնց պայքարում էլ կերտվում է երեխայի բնավորությունը: Ուշինսկին ընդգծել է, որ բնավորությունը ձևավորվում է կյանքի առային տարիներից և այն ինչ մտնում է բնավորության մեջ այդ երեխայի առաջին տարիներին, մտնում է հաստատ կերպով և կարծես թե դառնում է մարդու երկրորդ բնավորությունը: Երեխաների մոտ մինչև 7 տարեկան հասակը ստացած

[2] Ասմարյան Ք., Սիմոնյան Ա., Հայրենասիրությունը՝ որպես բարոյական դաստիարակության նախապայման, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2015, էջ 27-30

դաստիարակությունը մեծ ազդեցություն է ունենում հետագա ամբողջ զարգացման վրա:

Անժխտելի է, որ հայրենասիրությունը հանդիսանում է ազգի, ժողովրդի, հասարակության, պետության, սոցիալական հանրույթի, անհատի գոյատևման անբաժանելի բաղադրիչը, իսկ հասարակության և պետության դիալեկտիկական գոյատևումն անհնար է պատկերացնել առանց այդ իսկ կառույցների միասնության, ամբողջականության, դինամիկ ու բարեհաջող զարգացման կարևորագույն պայման հայրենասիրության:[3]

Հայրենասիրությունը հայ ժողովրդի համար ունի իր ինքնատիպ առանձնահատկությունները՝ պայմանավորված ազգային էթնիկական անկրկնելի պատմական զարգացմամբ, հոգևոր ու նյութական մշակույթով, աշխարհաքաղաքական ու բնապատմական զարգացումներով պայմանավորված կյանքի ընթացքով, հայ էթնոսի արիական, աշխարհաստեղծ մենթալիտետով, ազգային ինքնագիտակցությամբ, ի վերուստ տրված հարատևման անհրաժեշտությամբ:
Հայրենասիրության դրսևորման բարձր մակարդակի հասնելն ու դրա պահպանելը բավականին բարդ ու շատ աշխատատար գործընթացներով խնդիր է:

[3] http://www.hayzinvor.am/33565.html

ԳԼՈՒԽ 2 ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները և աշխարհի հետ բազմաճյուղ շփումներն այսօր կրթության առջև դնում են անձնային-սոցիալական արժեքային համակարգ ունեցող այնպիսի մարդ ձևավորելու պահանջ, որը կունենա ստեղծագործական գործունեություն ծավալելու պատրաստակամություն, պատասխանատվության բարձր զգացում, ցանկացած իրավիճակում ակտիվորեն գործելու և որոշումներ կայացնելու, դրանք հիմնավորելու ունակություններ:

Քանի որ նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակությունը յուրահատուկ է, ուստի կրկին անգամ մանկապարտեզում մեծանում է դաստիարակի դերը: Միշտ պետք է հիշել, որ մանկապարտեզում տիրող մթնոլորտը ոչ միայն ազդում է երեխաների ամբողջ օրվա տրամադրության վրա, այլև դաստիարակում է նրան: Այդ իսկ պատճառով պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որպեսզի ընտանիքում լավ դաստիարակություն ստացած շատ երեխաներ ոչ միայն չկորցնեն իրենց լավ գործերը, այլև եղածի վրա ավելացնեն կոլեկտիվիզմի, ընկերասիրության, փոխօգնության դրական հատկությունները: Եթե ուշադիր հետևենք երեխաների դաստիարակության ընթացքին, կտեսնենք, որ նրանք որոշ չափով էլ մեզ են դաստիարակում, սովորեցնում են կյանքին նայել իրենց աչքերով, ներկայանալ իրենց որպես սովորական մարդ՝ իրենց խաղերի և հետաքրքիր զբաղ մունքներին մասնակից, սովորեցնող շնորհալի մարդ և ոչ թե որպես դաստիարակ: Ուստի մեր ներդրած դաստիարակչական ջանքերը պետք է աննկատ մնան երեխաներից: Մենք չպետք է արտաքնապես շատ տարբերվենք դաստիարակությամբ, այլ բնական և անկեղծ կերպով մտա հոգվենք երեխաների կյանքը բովանդակալից և ուրախ կազմակեր պելու խնդրով: Իսկ դա հնարավոր է այն դեպքում, երբ դաստիարակը կարողանում է կյանքին նայել երեխայի աչքերով: Ուստի կարող ենք ասել, որ նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական, բարոյական դաստիարակության խնդիրների ճիշտ լուծումը մանկավարժներից, հոգեբաններից լուրջ ու հետևողական աշխատանք է պահաջում:

Նախադպրոցական տարիքը անձի կայացման առավել կարևոր ժամանակաշրջան է, երբ դրվում են քաղաքացիական որակների հիմ քերը, ձևավորվում են երեխաների առաջին պատկերացումները շրջապատող միջավայրի, հասարակության և մշակույթի մասին: «Հայրենասիրությունը», որը զուգորդված է այլ ժողովուրդների նկատմամբ հետաքրքրությամբ և սիրով, անփոխարինելի է մտքի և սրտի նորմալ զարգացման համար:

Մարդկանց համար բնական է սիրել իրենց հողը, իրենց գյուղը, քաղաքը, իրենց երկիրը և ժողովրդին, ինչպես նաև իրենց հարևաններին և այլ ազգերին, ողջ աշխարհը: Մարդու համար բնական է սիրելը. այս գաղափարը պետք է տարածվի դաստիարակության բոլոր ոլորտների վրա: Մենք ձևավորում ենք մեր սեփական «ես»-ը միայն այլ մարդկանց հետ շփման գործընթացում: Մինչև վերջերս, թվում էր, որ հայրենասիրության հարցը մեր երկրում վաղուց արդեն լուծված է: Սակայն հաճախ հանդիպում ենք երևույթների, որոնք կարող են ազդել յուրաքանչյուր ազնիվ մարդու ներաշխարհի վրա:

Նախադպրոցականի մեջ հայրենասիրական զգացմունքների դաստիարակումը երկար և բարդ գործընթաց է: Հարազատ մարդկանց, մանկապարտեզի, հարազատ քաղաքի և հայրենիքի հանդեպ սերը կարևոր նշանակություն ունի երեխայի անձնավորության զարգացման վրա: «Յուրաքանչյուր երեխա ծնվում է բարի և բարի կյանքի համար»,- ասել է հրաշալի դերասան Ե. Լեոնովը: Եվ բարոյական ինչպիսի որակ ներ կզարգանան երեխայի մոտ, հիմնականում կախված է ծնողներից և երեխային շրջապատող մեծահասակներից:

Արդի ժամանակաշրջանում երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության հարցը առավել հրատապ է: Հայրենասիրական դաստիարակության ծրագիրն անհրաժեշտ է իրականացնել երեխաների ուսուցման և դաստիարակության նոր մոտեցումների կիրառ ման միջոցով: Առաջին հերթին, դա նշանակում է հրաժարվել դաստիարակության ավտորիտար միջոցներից: Ուսուցումը պետք է լինի ուղղակի, զարգացնող, հարստացնի երեխայի գիտելիքները, ձևավորի ճանաչողական հետաքրքրություններն ու կարողությունները:

Անհրաժեշտ է հստակ պատկերացում, թե ինչպես ենք մենք ցանկանում նախադպրոցականի մեջ դաստիարակել հայրենասիրություն, սեր երկրի, քաղաքի, հարազատների, հարգանք մեծահասակների հան դեպ:

Այդ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ է կատարելագործել բարոյական դաստիարակությունը, զարգացնել երեխայի անձնական մշակույթը, որպես հայրենիքի հանդեպ սիրո հիմք: Այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ է առանձնացնել հե տևյալ խնդիրները.

• յուրաքանչյուր նախադպրոցականի մեջ առաջացնել հետաքրքրություն իր քաղաքի, մարզի, երկրի պատմության վերաբերյալ, ձևա վորել մարդասիրական վերաբերմունք շրջակա միջավայրի, բոլոր կենդանի էակների նկատմամբ,

• յուրաքանչյուր երեխայի մեջ արթնացնել հետաքրքրասիրություն, գեղեցիկը զգալու ունակություն, իր ընտանիքի, իր տան, իր սեփական ժողովրդի, նրա պատմության, սովորույթների և ավանդույթների հանդեպ ձևավորել սիրո, ջերմության և պատասխանատվության զգացում,

• օգնել ծնողներին պահպանել և զարգացնել երեխաների հե տաքրքրասիրությունը ծնող-երեխա-մանկապարտեզ համատեղ գոր ծունեության ընթացքում::[4]

Պարապմունքի պլան

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
	Միջին խումբ	<<Մեր հայրենիքը>>	2 պարապմունք
Նպատակը	• կդաստիարակենք սեր հայրենիքի նկատմամբ, • կծանոթանան Հայաստանի խորհրդանիշներին, • կզարգանա խմբում աշխատելու կարողություններ • կզարգանա սաների խոսքը և միտքը արտահայտվելու կարողությունները:		

[4] Ասմարյան Ք., Սիմոնյան Ա., Հայրենասիրությունը՝ որպես բարոյական դաստիարակության նախապայման, էջ 27

Նյութեր	• Դրոշ, զինանշան, ՀՀ քարտեզ, գունավոր թղթեր, մկրատ, սոսինձ, գունավոր մատիտներ, ծեփամածիկ, քար, խճանկար, ջրաներկ
Մեթոդներ	Մտագրոհ, ԳՈՒՍ
	Ընթացքը
Խթանման փուլ	Երեխաներին կանգնեցնել կիսաշրջանաձև: Պարապմունքը սկսել ՀՀ օրհներգով, երեխաների հետ միասին երգելով, ուշադրություն դարձնել, որ երեխաները ձեռքերը դնեն սրտին: - Երեխանե՛ր, ի՞նչ է մեր երկրի անունը: Կիրառել մտագրոհ մեթոդը Առաջին կանգնած երեխային տալ փոքրիկ քար, ուղղել հետևյալ հարցը. --Երեխանե՛ր, ի՞նչ եք հասկանում Հայաստան ասելով: Քարը մեկը մյուսին փոխանցելով պիտի ասեն յուրաքանչյուրը իր բնորոշումը և նստի:
Իմաստի ընկալման փուլ	Երեխաների ուշադրությունը հրավիրել ՀՀ դրոշի, զինանշանի վրա: Փորձել հասկանալ ինչ գիտեն երեխաները խորհրդանիշների մասին, այնուհետև անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին: Ընթերցել Հայաստան բանաստեղծությունը: Հայաստանը Իմ անունն է, Ազգանունն է, Ինձ ուժ տվող զորությունն է , Իմ հինը և նորությունն է, Իմ լեզուն է, այբուբենը, Ուրիշ խոսքով՝ այն ամենը, Որ կոչվում է հայրենի տուն... Եվ այն տունն է , Որ շինել է պապիս պապը Անդուլ ջանքով Ու տանջանքով .

	Քար է դրել քարի վրա, Դար է դրել դարի վրա Եվ քրտինքը թուխ ճակատին՝ Ջուլել է նա պատը պատին. Էլ ոչ մի հուր, Էլ ոչ մի սուր Չիմ տնելու իմ նոր տունը, Չի ջնջելու իմ անունը. Աղգանունը Իմ լեզուն ու այբուբենը, Ուրիշխոսքով՝ այն ամենը, Ինչը ամուր սյունն է իմտան Եվ միասին կոչվում է հայ Ու Հայաստան. Եվ ես հիմա իմ տան պատին Նոր-նոր քարեր պիտի դնեմ, Նոր-նոր դարեր պիտի դնեմ. Ու գնալով հզորանա. Ծլարձակի ու նորանա, Որ միշտ պահի իմ անունը, Ազգանունը, Իմ մայր լեզուն, այբուբենը, Ուրիշ խոսքով՝ այն ամենը, Ինչը կյանք ու խորհուրդն է տան Եվ միասին կոչվում է հայ Ու Հայաստան. -Երեխանե՛ր, ինչի մասին էր բանաստեղծությունը: -Եկեք ցույց տանք մեր երկիրը քարտեզի վրա:
Ֆիզկուլտ դադար	Երաժշտության ներքո վարժությունների կատարում
	-Երեխաներ, Հայաստանը մեր բոլորի ընդհանուր տունն է: Եվ ինչպես մեր ծնողներն են մեզ պաշտպանում, խնամում ու հոգ տանում մեր մասին, այնպես էլ մենք պետք է սիրենք, փայփայենք և պաշտպանենք մեր հայրենիքը:

	-Երեխաներին բաժանել խմբերի, տալ հետևյալ հանձնարարությունները. 1-ին խումբը պիտի հավաքի խճանկար՝ ստանալով մեր եռագույնը: 2-րդ խումբը՝ գունավոր թղթերով պիստի պատրաստի դրոշը: 3-րդ խումբը ծեփամածիկով պիտի պատրաստի դրոշ: 4-րդ խումբը պիտի նկարի հայրենիք: Աշխատանքի ընթացքում միացնել Ռիտա Հովհանիսյան <<Հայրենիք>> մանկական երգը . /https://www.youtube.com/watch?v=UCzP_-OBtbE /
Կշռադատման փուլ	Խմբային աշխատանքի ավարտից հետո, երեխաների կատարած աշխատանքները փակցնել գրատախտակին և քննարկել: Պարապմունքի ավարտին բոլորը միասին կրկնում են. Հայաստանը Իմ անունն է, Ազգանունն է, Ինձ ուժ տվող զորությունն է : Մենք հպարտ ենք, որ հայ ենք

Եզրակացություն

Այսպիսով, ազգային արժեհամակարգով նոր սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում հայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում:

Ժամանակակից հասարակության մեջ հայրենասիրական դաստիարակությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում մի քանի պատճառներով. բարձրանում է նոր սերնդի տեղեկացվածության մակարդակը, ժողովրդավարացման գործընթացները և քաղաքական կյանքում բազմակուսակցական համակարգի գոյությունը որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը: Անհրաժեշտություն է առաջանում մանկապարտեզից սկսած հայրենասիրական դաստիարակությունն իրականացնել որակապես նոր մակարդակով:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք. այն չի ձևավորվում միանգամից. դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

Աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության հիմնահարցը հրատապ է մարդկային հասարակության զարգացման բոլոր փուլերում: Աճող սերնդի հայրենասիրական դաստիարակությունն իրականացնելու գործում առաջատար դեր են խաղում դաստիարակները, քանի որ նրանք են մանկապարտեզից սկսած սեր սերմանում հայրենիքի նկատմամբ: Նրանք են ձևավորում այն արժեքները, որը պիտի սիրեն և պահպանեն: Իսկ հայրենիքի հանդեպը սեր սերմանելը դա ամենավեհ և սուրբ գործն է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասմարյան Ք., Սիմոնյան Ա., Հայրենասիրությունը՝ որպես բարոյական դաստիարակության նախապայման, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2015, էջ 27-30
2. Բրուտյան Վ., Հայրենասիրությունը որպես ազգային գաղափարախոսություն, «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» միջբուհական հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր 2015, էջ 17-22:
3. https://forum.armedu.am/
4. http://shsu.am/media/journal/2019n2b/33.pdf
5. http://www.hayzinvor.am/33565.html